ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/47» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան **« 05 » « նոյեմբերի » 2018թ.**
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ռ.Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Է.Միերյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Ա.Փաշայան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ.Զոհրաբյան

1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/47» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

(Ռ.Զոբանյան)

1.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/47» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2018 թվականի նոյեմբերի 5-ին, ժամը 11:00-ին, ՀՀ բնապահպանության նախարարության շենքում, ք.Երևան, Կառավարության 3շ., 5-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/47» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/47» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2018 թվականի հոկտեմբերի 31-ին ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

3. «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/47» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

(Ռ.Զոբանյան)

3.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից Հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են բնապահպանության նախարարության gnumner.mnp@yandex.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Հանձնաժողովը որոշեց՝

(Ռ.Զոբանյան)

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները հաղթող ճանաչել «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ին:

4.2. Պայմանագրի կնքման նպատակով «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/47» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին՝ ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

4.3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**)	Ռ. Զոբանյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Մ.Այդինյան
Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**)	Է.Միերյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Հ.Հովհաննիսյան
Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**)	Ա.Փաշայան
Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**)	Լ. Զոհրաբյան